


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. ապրիլին


/վերլուծություն/

2013թ. ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 15824 գործարքներ, որոնց քանակը 2013թ. մարտի համեմատ նվազել է 2.8%-ով, իսկ 2012թ. ապրիլի համեմատ աճել՝ 16.7%-ով:

2013թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4008 օտարման գործարքների 74.6%-ը կազմել են առուվաճառքները, 25.1%-ը՝ նվիրատվությունները և 0.3%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.5%-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.3%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. ապրիլին, 2013թ. մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 3.0%-ով, իսկ 2012թ. ապրիլի համեմատ աճել՝ 17.5%-ով:

2013թ. ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.7%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. ապրիլին, 2013թ. մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 2.5%-ով, իսկ 2012թ. ապրիլի համեմատ աճել՝ 4.0%-ով:

2013թ. ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2012թ.	ապրիլ 2013թ.	մարտ 2013թ.
Կենտրոն	405000	428000	426100
Արաբկիր	335000	355500	353500
Քանաքեռ-Զեյթուն	262300	282200	281400
Նոր-Նորք	225100	250000	248100
Ավան	235100	258050	256800
Էրեբունի	233100	248200	247100
Շենգավիթ	231000	254000	252500
Դավթաշեն	257500	273500	272000
Աջափնյակ	225050	246500	245000
Մալաթիա-Սեբաստիա	222000	238550	237000
Նուբարաշեն	140100	151000	148000
Միջինը Երևանում	251900	271400	269800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. ապրիլին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. մարտի համեմատ, աճել են 0.6%-ով:

2013թ. ապրիլին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 331 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. մարտի համեմատ նվազել է 5.2%-ով, իսկ 2012թ. ապրիլի համեմատ աճել՝ 6.1%-ով:

2013թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2012թ.	ապրիլ 2013թ.	մարտ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	110100	114800	114800
	Ապարան	48000	56550	55000
	Թալին	60850	64000	62500
Արարատ	Արտաշատ	91150	94800	94800

	Մասիս	107500	115000	113300
	Վեդի	96100	99300	98500
	Արարատ	73050	75100	75100
Արմավիր	Վաղարշապատ	151200	154000	154000
	Արմավիր	116800	121000	121000
	Մեծամոր	86000	87500	87500
Գեղարքունիք	Սևան	96000	99150	99150
	Գավառ	51000	59000	59000
	Ապրիլունի	102000	107600	107600
	Վարդենիս	33000	44300	43500
	Ճամբարակ	21100	27500	27500
Լոռի	Վանաձոր	85000	88300	88300
	Ստեփանավան	72000	74500	74500
	Սպիտակ	99000	99800	99800
	Ալավերդի	49000	55000	54800
	Տաշիր	40000	47000	45900
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19500	20000	19800
Կոտայք	Աբովյան	151050	154000	154000
	Նոր Հաճն	127900	128500	128500
	Բյուրեղավան	106800	108100	108100
	Եղվարդ	108000	109300	109300
	Հրազդան	58000	63800	63800
	Ծաղկաձոր	292000	292500	292500
	Չարենցավան	82500	85500	85500
Շիրակ	Գյումրի	107200	109300	109300
	Արթիկ	64100	66300	66300
	Մարալիկ	35600	40100	40100
Սյունիք	Գորիս	114000	121000	119000
	Կապան	88000	92100	91500
	Սիսիան	78000	91100	89500
	Մեղրի	65000	80050	78000
	Ագարակ	39700	46000	46000
	Քաջարան	94050	94300	94300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	82000	94600	93000
	Եղեգնաձոր	115100	122500	120000
	Ջերմուկ	100100	112050	111000
Տավուշ	Դիլիջան	102000	112000	110500
	Իջևան	110000	118100	118100
	Բերդ	48500	60000	58100
	Նոյեմբերյան	41000	49100	47000
	Այրում	24500	31500	30100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. մարտի համեմատ, աճել են 0.6%-ով:

2013թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 411 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 87, մարզերում միասին վերցրած՝ 324: 2013թ. ապրիլին, 2013թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 4.3%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 17.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 12.1%-ով: 2012թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 17.1%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 17.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 32.2%-ով:

2013թ. ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների

/պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	ապրիլ 2012թ.	ապրիլ 2013թ.	մարտ 2013թ.
Կենտրոն	458900	476100	474000
Արաբկիր	364500	383000	381150
Քանաքեռ Զեյթուն	275200	295000	293450
Նորք Մարաշ	301100	319200	318400
Ավան	255500	270500	269750
Էրեբունի	225300	239500	238850
Շենգավիթ	240000	255000	253900
Դավթաշեն	258300	276000	275200
Աջափնյակ	236700	250050	249000
Մալաթիա Սեբաստիա	223000	238000	237100
Նուբարաշեն	144500	150500	149550
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	271200	286600	285500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. ապրիլին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. մարտի համեմատ աճել են 0.4%:

2013թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առավաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2012թ.	ապրիլ 2013թ.	մարտ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	130150	136200	136200
	Ապարան	51200	60000	59500
	Թալին	68450	69100	68650
Արարատ	Արտաշատ	97450	100000	99200
	Մասիս	110100	115100	114600
	Վեդի	99500	102300	101400
	Արարատ	87000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	150000	153100	153100
	Արմավիր	102000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	91000	94800	94800
	Գավառ	50800	57100	57100
	Այրիլունի	90100	96000	96000
	Վարդենիս	34000	41000	39800
	Ճամբարակ	25900	31000	30000
Լոռի	Վանաձոր	95000	100000	100000
	Ստեփանավան	86900	90000	89800
	Սպիտակ	111100	114000	114000
	Ալավերդի	46500	49500	48300
	Տաշիր	50100	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000

	Շամլուղ	13200	14000	14000
	Ախթալա	29400	30000	30000
Կոտայք	Աբովյան	150000	155800	155800
	Նոր Հաճն	128000	129800	129800
	Բյուրեղավան	119900	120500	120500
	Եղվարդ	114400	116100	116100
	Հրազդան	77000	82400	82400
	Ծաղկաձոր	303600	305000	305000
	Չարենցավան	80000	83000	83000
	Գյումրի	115500	118500	118500
Շիրակ	Արթիկ	61000	63100	63100
	Մարալիկ	48000	52000	52000
	Գորիս	126800	130000	130000
Սյունիք	Կապան	97600	99800	99500
	Սիսիան	87600	96100	95000
	Մեղրի	74000	84500	83500
	Ագարակ	45900	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11610
	Վայք	81500	90000	89000
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	110000	116600	116600
	Ջերմուկ	118400	131200	130000
	Դիլիջան	103000	112500	111100
Տավուշ	Իջևան	119800	123100	122000
	Բերդ	57700	60000	59000
	Նոյեմբերյան	45600	48000	47000
	Այրում	34200	36000	35100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. մարտի համեմատ, աճել են 0.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. ապրիլին հանրապետությունում օտարվել են 1360 միավոր /596.02 հա/ հողեր, որից Երևանում՝ 158 միավոր /10.50 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 688 միավոր /541.65 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /1.56 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 463 միավոր /38.15 հա/, որից Երևանում՝ 79 միավոր /3.06 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 175 միավոր /11.53 հա/, որից Երևանում՝ 69 միավոր /5.36 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 14 միավոր /2.36 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.51 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 8 միավոր /1.43 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 10 միավոր /0.78 հա/,
- ջրային հողեր՝ 2 միավոր /0.11 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. ապրիլին հանրապետությունում օտարված հողերից 1104 միավորի /478.43 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 124 միավոր /7.27 հա/, նվիրատվության գործարքներ՝ 246 միավորի /117.11 հա/, որից Երևանում՝ 28 միավոր /3.12 հա/ և փոխանակության գործարքներ՝ 10 միավորի /0.48 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /0.11 հա/:

Հանրապետությունում 2013թ. ապրիլին, 2012թ. ապրիլի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 26.2%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 26.3%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 25.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 6.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 150.60 հա, որից 145.34 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.6%-ը կամ 272 գործարքներ /45.35 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 77 միավոր /2.96 հա/, իսկ 73.8%-ը կամ 815 միավորը /427.92 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 47 միավոր /4.30 հա/: 2013թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 17 գործարք /5.16 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. ապրիլին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող											
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողեր				Արդյունաբերական օբյեկտների հողեր			
									Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակավայրերի հողեր		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	0	0.00	0	0.00	34	0.19	43	2.77	2	0.04	4	0.51	29	1.94	12	1.81				
Արագածոտն	31	7.08	0	0.00	0	0.00	7	0.54	84	47.85	0	0.00	23	2.23	2	0.38				
Արարատ	2	1.38	0	0.00	2	0.15	10	0.11	76	29.11	0	0.00	66	5.41	8	0.24				
Արմավիր	4	3.61	0	0.00	1	0.02	3	0.05	90	141.74	1	0.01	50	5.16	4	0.03				
Գեղարքունիք	4	4.37	1	0.01	23	1.97	6	0.26	34	25.20	1	0.12	18	2.55	0	0.00				
Լոռի	0	0.00	0	0.00	3	0.09	9	0.10	17	13.30	0	0.00	8	0.69	3	0.01				
Կոտայք	12	11.12	1	0.10	12	0.90	10	1.53	66	33.58	2	0.73	69	5.62	7	0.89				
Շիրակ	1	0.84	0	0.00	5	0.04	4	0.17	31	30.59	0	0.00	7	0.59	2	0.26				
Սյունիք	0	0.00	2	0.86	0	0.00	3	0.04	35	37.98	1	0.01	2	0.19	1	0.01				
Վայոց Ձոր	6	3.85	0	0.00	10	0.71	2	0.03	17	30.17	0	0.00	5	0.47	0	0.00				
Տավուշ	0	0.00	1	0.01	4	0.14	3	0.66	16	6.77	0	0.00	13	1.05	3	0.11				
Ընդամենը	60	32.25	5	0.98	94	4.21	100	6.26	468	396.33	9	1.38	290	25.90	42	3.74				

Ստորև ներկայացվում է 2013թ. ապրիլին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	63	1.88	0	0.00	34	0.19	29	1.69	14	1.08	0	0.00	0	0.00	0	0.00	14	1.08
Արագածոտն	7	0.54	0	0.00	0	0.00	7	0.54	1	0.13	1	0.13	0	0.00	0	0.00	0	0.00
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	1.64	2	1.38	0	0.00	2	0.15	10	0.11
Արմավիր	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	7	3.66	4	3.61	0	0.00	0	0.00	3	0.05
Գեղարքունիք	3	0.14	0	0.00	3	0.14	0	0.00	31	6.47	4	4.37	1	0.01	20	1.83	6	0.26
Լոռի	9	0.065	0	0.00	2	0.005	7	0.06	3	0.13	0	0.00	0	0.00	1	0.09	2	0.04
Կոտայք	2	0.05	0	0.00	1	0.01	1	0.04	31	13.36	10	10.88	1	0.10	11	0.89	9	1.49
Շիրակ	5	0.09	0	0.00	3	0.02	2	0.07	5	0.96	1	0.84	0	0.00	2	0.02	2	0.10
Սյունիք	2	0.86	2	0.86	0	0.00	0	0.00	3	0.03	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.03
Վայոց Ձոր	2	0.033	0	0.00	1	0.003	1	0.03	16	4.552	6	3.85	0	0.00	9	0.70	1	0.002
Տավուշ	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	7	0.80	0	0.00	1	0.01	4	0.14	2	0.65
Ընդամենը	95	3.69	2	0.86	45	0.39	48	2.44	132	32.81	28	25.06	3	0.12	49	3.82	52	3.81

2013թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 32 գործարք /7.18 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. ապրիլին, 2012թ. ապրիլի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 43.2%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 14-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել է 28.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 3.7%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 75.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 57.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 50.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. ապրիլին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						57	23.68	365.0	12000.0	3600.0
Ապարան	1	0.13	2982.9	2982.9	2982.9	8	6.78	86.5	2727.3	730.0
Թալին						12	6.46	93.6	5494.5	661.2
Ծաղկահովիտ						7	10.93	79.5	1000.0	272.3
Արարատի մարզ										
Արտաշատ						42	13.23	335.1	10833.3	2870.0
Մասիս	2	1.38	471.6	590.0	530.8	14	4.29	200.0	11904.8	3127.4
Վեդի						20	11.59	207.0	10795.1	1842.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	2.52	121.9	271.5	189.4	39	18.24	294.3	9090.0	1380.0
Բաղրամյան						34	114.84	90.6	2561.1	780.0
Վաղարշապատ	1	1.08	622.2	622.2	622.2	14	6.58	444.4	11764.7	2320.0

Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	1.50	616.2	635.5	625.8	8	1.80	199.8	1875.0	420.0
Ճամբարակ						15	7.68	60.5	953.3	355.2
Ապրիլունի						2	0.45	51.1	2850.0	738.5
Սևան	2	2.87	777.5	841.0	809.2	1	0.43	52.2	2134.8	318.5
Վարդենիս						8	14.84	41.2	2575.1	415.1
Լոռու մարզ										
Ալավերդի								170.4	6424.2	602.3
Գուգարք						2	0.52	234.6	6065.9	760.0
Սպիտակ						1	0.63	250.0	5555.5	730.8
Ստեփանավան						2	1.06	90.6	1686.6	320.0
Տաշիր						9	5.36	45.3	1384.4	155.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	1.12	232.0	2467.3	977.1	24	12.16	279.3	11942.7	4475.4
Եղվարդ	7	9.76	75.8	1052.7	495.5	29	14.93	174.4	11971.8	2642.7
Հրազդան						13	6.49	130.5	10256.4	1665.2
Շիրակի մարզ										
Ախուրյան						9	7.38	252.0	1693.1	620.0
Ամասիա						1	6.15	40.9	261.0	128.5
Անի						11	11.52	110.6	546.9	383.5
Աշոցք								58.5	215.8	126.1
Արթիկ	1	0.84	420.0	420.0	420.0	10	5.54	79.4	1428.6	412.3
Սյունիքի մարզ										
Գորիս						4	3.41	92.6	1023.2	720.0
Կապան						2	0.61	120.0	841.6	352.2
Մեղրի						6	1.13	193.0	3000.0	732.7
Սիսիան						23	32.83	46.3	1977.4	540.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	2.47	39.4	206.3	93.8	9	22.96	125.0	10000.0	1910.0
Վայք	2	1.38	110.3	133.1	121.7	8	7.21	58.8	1430.7	630.0
Տավուշի մարզ										
Բերդ						7	1.60	213.3	3783.8	685.5
Իջևան						7	4.76	267.5	9454.5	1245.2
Նոյեմբերյան						2	0.41	46.7	7368.4	873.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. ապրիլին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասվել ազդյուն	Միջին			Նվազագույն	Մասվել ազդյուն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						16	12472.0	130.7	22200.0	2576.1
Ապարան						2	2552.0	124.1	609.6	390.0
Թային						3	3084.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						2	4170.0	60.0	214.3	88.0
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1000.0	145.0	145.0	145.0	17	17026.1	173.9	7140.3	896.0
Մասիս						37	24251.6	187.5	25000.0	1210.0

Վեղի	1	486.4	840.9	840.9	840.9	11	11756.2	126.1	5000.0	661.2
Արմավիրի մարզ										
Արմավիր						20	21532.5	131.6	9090.9	1213.8
Բաղրամյան						1	1700.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						27	26326.0	197.4	26528.4	1528.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	7	6144.5	187.9	193.0	189.4	3	1617.0	186.6	1084.3	683.2
Ճամբարակ	2	2077.0	106.6	108.7	107.7	2	7422.0	71.3	2286.2	148.1
Ապրիլունի	9	8504.0	129.0	219.8	199.5	11	12399.0	119.3	5000.0	282.5
Սևան	1	1534.0	714.2	714.2	714.2			240.0	3110.4	315.0
Վարդենիս	1	35.2	600.0	600.0	600.0	2	4098.2	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի								114.3	1388.9	216.6
Գուգարք						2	840.0	77.9	14083.3	1262.2
Սպիտակ	1	897.6	256.2	256.2	256.2	5	5453.0	104.9	1348.3	206.0
Ստեփանավան								88.2	1666.7	175.5
Տաշիր						1	584.8	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	10	8793.4	407.5	4750.3	2487.3	36	30925.9	264.5	35353.5	1986.3
Եղվարդ	1	97.0	3381.0	3381.0	3381.0	31	23714.2	173.6	27000.0	2856.0
Հրազդան						2	1600.0	117.7	34848.5	1319.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						2	718.2	113.6	18750.0	333.3
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						1	1860.0	67.9	180.6	173.5
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	2	194.1	289.7	2114.3	1202.0	4	3336.0	111.8	5000.0	217.0
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	367.9
Կապան						1	520.0	67.9	2638.9	300.0
Մեղրի								68.5	632.9	208.0
Սիսիան						1	1410.0	123.5	875.0	209.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	8	6830.0	64.8	1496.4	422.1	4	2822.0	96.7	7659.6	503.2
Վայք	1	200.0	931.5	931.5	931.5	1	1830.0	120.7	1448.3	217.5
Տավուշի մարզ										
Բերդ						1	584.0	75.8	810.0	115.0
Իջևան	3	1205.2	1444.4	3000.0	2481.5	12	9923.7	74.1	14423.1	516.0
Նոյեմբերյան	1	164.8	580.8	580.8	580.8			125.0	1948.1	228.0

2013թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 734 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 74.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. ապրիլին, 2013թ. մարտի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 6.3%-ով, իսկ 2012թ. ապրիլի համեմատ՝ 2.7%-ով:

2013թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 41 բնակարանների, 69 անհատական բնակելի տների, 401 հասարակական, 66 արտադրական նշանակության օբյեկտների, 145 հողերի, 10 ավտոտնակների և 2 վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 8 վարձակալության գործարքների, այդ թվում 3 միավոր /0.01 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2013թ. մարտի համեմատ նվազել է 52.9%-ով, իսկ 2012թ. ապրիլի համեմատ՝ 71.4%-ով: 2013թ. ապրիլին հանրապետությունում վարձակալված 1091.54 հա հողերից 0.10 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1091.44 հա հողերից 1080.21 հա կազմում են գյուղատնտեսական

նշանակության, 8.80 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 691.19 հա, որից 691.10 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2120 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.4%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. մարտի համեմատ աճել է 7.1%-ով, իսկ 2012թ. ապրիլի համեմատ՝ 1.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.7%/, առանձնատների /25.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.7%/ և հողերի /8.2%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1119 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. մարտի համեմատ աճել է 1.0%-ով, իսկ 2012թ. ապրիլի համեմատ՝ 7.4%-ով:

2013թ. ապրիլին հանրապետությունում գրավադրվել են 145.37 հա հողեր, որից 13.50 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 87.8%-ը կամ 127.63 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 55.90 հա, որից 55.63 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. ապրիլին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 161 գործարքներ, որից 120-ը՝ Երևանում: 2013թ. մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 1.3%-ով, ընդ որում Երևանում՝ 5.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 8.9%-ով: 2012թ. ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 6.4%-ով, ընդ որում Երևանում՝ աճել 41.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 52.9%-ով:

2013թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2265 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. մարտի համեմատ աճել է 13.3%-ով, իսկ 2012թ. ապրիլի համեմատ՝ 63.7%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /38.3%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե